ՀԱՍՏԱՏՎԱԾ Է «Լիմիթլես Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ խորհրդի **04/04/2023թ. թիվ 04.04.2023/2 խորհրդի որոշմամբ** ՓՈՓՈԽՎԱԾ Է **29/01/2024թ. թիվ 29.01.2024/1 խորհրդի որոշմամբ** ՓՈՓՈԽՎԱԾ Է **31/05/2024թ. թիվ 31.05.2024/1 խորհրդի որոշմամբ** ՓՈՓՈԽՎԱԾ Է **27/02/2025թ. թիվ 27.02.2025/1 խորհրդի որոշմամբ** «Լիմիթլես Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ խորհրդի նախագահ՝ Կիմ Ավանեսյան (ստորագրություն)	Պայմանագրային ֆոնդի ՀՎՀՀ՝ 08260196 ԳՐԱՆՑՎԱԾ Է ՀՀ կենտրոնական բանկում 22/04/2025 թ. թիվ 66 Ա որոշմամբ ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝ Մարտին Գալստյան (ստորագրություն)

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

«ԼԻՄԻԹԼԵՍ ՓՐԱՅՄ»

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՌԻՍԿՈՎ (ՀԵՋ) ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԲԱՑ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴ

2023

Բովանդակություն

1. Հիմնական հասկացություններ 3
2. Ընդհանուր դրույթներ 6
3. Ֆոնդի ներդրումային նպատակները և ռազմավարությունը 6
4. Ֆոնդում ներդրումների հետ կապված ռիսկերը 7
5. Ֆոնդում մասնակցությունը: Ֆոնդի փայերը և դրանց ձեռքբերման կարգը 9
6. Փայերի հետգնումը (մարումը) և միջոցների վերադարձը 11
7. Մասնակիցների իրավունքները և պարտականությունները 12
8. Կառավարչի իրավունքները և պարտականությունները 13
11. Ֆոնդի մասնակիցներին տեղեկությունների տրամադրումը 15
12. Զուտ ակտիվների արժեքը 17
13. Ֆոնդի ակտիվների գնահատումը 18
14. Ֆոնդի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը 20
16. Ֆոնդի եկամուտների բաշխման քաղաքականությունը 22
17. Ֆոնդի հաշվին կատարվող ծախսերը և վճարները 22
19. Ֆոնդի տեսակի փոփոխման, ֆոնդի միացման և դադարման կարգը 23
20. Ֆոնդի կանոնների փոփոխությունը 25

Այս փաստաթուղթը հանդիսանում է «Լիմիթլես Փրայմ» ներդրումային ֆոնդի (այսուհետ՝ «Ֆոնդ») կանոնները և Ֆոնդի մասնակիցների (այսուհետ՝ Մասնակիցներ) և Ֆոնդի կառավարումն իրականացնող անձի միջև կնքված պայմանագիրը (այսուհետ՝ «Կանոններ»), որը հաստատվել է Ֆոնդի կառավարումն իրականացնող «Լիմիթլես Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության խորհրդի կողմից:

1. Հիմնական հասկացություններ

1.1. Ստորև այբբենական կարգով ներկայացվող հասկացությունները ունեն հետևյալ նշանակությունը, եթե կանոններով այլ բան սահմանված չէ՝

Աշխատանքային օր - ցանկացած օր, որը չի հանդիսանում շաբաթ կամ կիրակի օր (բացառությամբ այն շաբաթ կամ կիրակի օրերի, որոնք ՀՀ օրենսդրության համաձայն աշխատանքային օր են) կամ «Տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով տոնի կամ հիշատակի օր,

Ապահովված պարտատոմսեր - «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան թողարկված ապահովված հիփոթեքային պարտատոմսեր, ինչպես նաև բանկերի կամ վարկային կազմակերպությունների (այդ թվում՝ օտարերկրյա) թողարկած պարտքային արժեթղթեր, որոնց տեղաբաշխումից ստացված միջոցները ներդրվում են այնպիսի ակտիվներում, որոնք՝ ա. այդ պարտքային արժեթղթերի վավերության ողջ ժամանակահատվածի համար հանդիսանում են բավարար ապահովություն (ծածկույթ) դրանց գծով ամրագրված պարտավորությունների կատարման համար, և բ. թողարկողի անվճարունակության կամ սնանկության դեպքում առաջնահերթորեն օգտագործվում են այդ պարտքային արժեթղթերի գծով դրանց սեփականատերերի հանդեպ պարտավորությունների կատարման (արժեթղթի մայր գումարի (անվանական արժեքի) և հաշվեգրված տոկոսների փոխհատուցման) համար:

Դիվերսիֆիկացիա (տարատեսականացում) - ռիսկերի նվազեցումն է տարբեր ակտիվներում միաժամանակյա ներդրման միջոցով՝ հաշվի առնելով յուրաքանչյուր ակտիվի ռիսկայնության ազդեցությունը այդ ակտիվների համախմբի վրա,

Ինտերնետային տնային էջ - Կառավարչի ինտերնետային կայքը՝ www.limitlessam.com

Կառավարիչ - 2.3. կետով սահմանված՝ Ֆոնդի Կառավարիչ,

Կառավարչի պարգևավճար - ֆոնդի կառավարման համար Կառավարչին վճարվող պարգևավճար,

Կանոնակարգ 4/04 - «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ»

Կանոնակարգ 10/04 - Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 335-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման կարգը» կանոնակարգ 10/04,

Կանոնակարգ 10/10 - Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի՝ 2011 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 337-Ն որոշմամբ հաստատված «ներդրումային ֆոնդերի ներդրումային սահմանափակումները» կանոնակարգ 10/10,

Կանոնակարգ 10/31 - Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի՝ 2018 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 171-Ն որոշմամբ հաստատված «ներդրումային ֆոնդի պահառուի կառուցվածքի եվ գործունեության նկատմամբ լրացուցիչ պահանջները» կանոնակարգ 10/31,

Կենտրոնական Բանկ - Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկը,

Կտրման պահ – որոշակի պահ, որի դրությամբ հաշվարկվում են ֆոնդի զուտ ակտիվների արժեքը: Հայաստանի Հանրապետությունում թողարկված գործիքների համար Կտրման պահն է Գնահատման օրվա ժամը 23:59-ը, իսկ արտասահմանյան գործիքների համար Կտրման պահն է ԶԱԱ հաշվարկման օրվա 10:00-ն

Բանկ - Կենտրոնական Բանկի կողմից բանկային գործունեության լիցենզիա ստացած բանկ կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղ

Մասնակից - Ֆոնդի փայերի սեփականատեր,

Մարման գին - փայի հետգնման գինն է, որը որոշվում է համապատասխան փայի հաշվարկային արժեքի և դրամական արտահայտությամբ մարման վճարի տարբերությամբ,

Ներդրումային ֆոնդ - ըստ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

Պահառու - 2.5. կետով սահմանված Ֆոնդի Պահառու,

Ռեեստր - Ֆոնդի մասնակիցների ռեեստր,

Ռեեստրավար - 2.6. կետում սահմանված ռեեստրավար,

Տարանցիկ հաշիվ - Կառավարչի՝ հաճախորդների համար բացված հատուկ հաշիվ, որին մուտքագրվում են ներդրողի կողմից կատարվող վճարները,

Թողարկման գին - փայի տեղաբաշխման գինն է, որը որոշվում է համապատասխան փայի հաշվարկային արժեքի և դրամական արտահայտությամբ

Թողարկման վճարի հանրագումարով,

ՖՀՄՍ - Հաշվապահական Ստանդարտների ՄիջազգայինԽորհրդի կողմից ընդունված և կիրառվող ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ,

Էական Իրադարձություններ - իրադարձություններ, որոնք կարող են ազդել Կառավարչի կողմից իր՝ ՀՀ օրենսդրությամբ և սույն Կանոններով նախատեսված պարտավորությունների կատարման վրա և ներառումն են հետևյալ դեպքերից մեկը կամ մի քանիսը.

(ա) շուկայի խափանումներ, այդ թվում՝ կարգավորվող շուկաների (բորսաների) չկանխատեսված փակումներ կամ աշխատանքի չպլանավորված ընդհատումներ, կարգավորվող շուկաների, բորսաների, բանկային համակարգի, վճարահաշվարկային համակարգի բնականոն աշխատանքի խափանումներ (այդ թվում նաև տեխնիկական),

(բ) անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով առաջացած դեպքերը: Էական Իրադարձության առկայությունը կամ բացակայությունը որոշվում է Կառավարչի կողմից:

Սույն կանոններում չսահմանված հասկացությունները ունեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված նշանակությունը:

1.2. Բացառությամբ եթե այլ բան նախատեսված չէ սույն Կանոններով կամ այլ բան չի բխում դրա առանձին կանոնի իմաստից, ապա սույն Կանոններում.

(ա) եթե բառը նշված է եզակի թվով, ապա դա տարածվում է նաև այդ բառի հոգնակիի վրա և հակառակը,

(բ) հղումը որևէ պայմանագրի, օրենքի, ենթաօրենսդրական ակտի, կանոնի նշանակում է հղում այդ պայմանագրին, օրենքին, ենթաօրենսդրական ակտին, կանոնին դրա փոփոխություններին և լրացումներին, որոնք կատարվել են մինչև սույն Կաննոններն ուժի մեջ մտնելը և դրանից հետո,

(գ) հղումը «օրենսդրությանը» նշանակում է հղում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից վավերացված կամ Հայաստանի Հանրապետության Նախագահի հաստատած և ուժի մեջ մտած միջազգային պայմանագրերին, Հայաստանի Հանրապետության օրենքներին, և այլ օրենսդրական ակտերին, գերատեսչական ակտերին, դրանց փոփոխություններին և լրացումներին:

2. Ընդհանուր դրույթներ

2.1. «Լիմիթլես Փրայմ»-ը իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող բաց, լրացուցիչ ռիսկով (հեջ ֆոնդ), հրապարակային, պայմանագրային ներդրումային ֆոնդ է:

2.2. Ֆոնդի հայերեն լրիվ անվանումն է «Լիմիթլես Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի «Լիմիթլես Փրայմ» հրապարակային, պայմանագրային, բաց, լրացուցիչ ռիսկով ներդրումային ֆոնդ: Ֆոնդի անգլերեն լրիվ անվանումն է «Limitless Asset Management» CJSC «Limitless Prime» public, contractual, open investment hedge fund: Ֆոնդի ռուսերեն լրիվ անվանումն է ЗАО «Лимитлес Асет Менеджмент» «Лимитлес Прайм» публичный, паевой, открытый, инвестиционный, хедж фонд:

2.3. Ֆոնդի կառավարումն իրականացնում է «Լիմիթլես Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն, որը գրանցված է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից (27.12.2022թ. լիցենզիայի համարը 0007)՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան (այսուհետ՝ Կառավարիչ): Կառավարչի հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Քեռու 1/3 տ 5-րդ հարկ, հեռախոս +37411888118:

2.4. Ֆոնդի գտնվելու վայր է համարվում Կառավարչի գտնվելու վայրը:

2.5. Ֆոնդի Պահառու է հանդիսանում «ԱյԴԻ Բանկ» ՓԲԸ-ն, գրանցման հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փող., 13 շենք:

2.6. Ռեեստրավար է հանդիսանում Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիան՝ ի դեմս «ԱյԴԻ Բանկ» ՓԲԸ-ի, գրանցման հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փող., 13 շենք:

2.7. Ֆոնդը ստեղծված է համարվում օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցման պահից:

2.8. Ֆոնդի գործունեությունը սահմանափակված չէ որոշակի ժամկետով:

2.9. Ֆոնդի եկամտաբերության որևէ մակարդակ չի երաշխավորվում:

3. Ֆոնդի ներդրումային նպատակները և ռազմավարությունը

3.1. Ֆոնդը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված ֆոնդի կառավարման պայմանագրի հիման վրա ձևավորվող, փայերի հրապարակային առաջարկի միջոցով հավաքագրված դրամական միջոցների և դրանց ներդրմամբ ձեռքբերված ակտիվների համախումբ է, որը կառավարվում է Կառավարիչի կողմից և հանդիսանում է Մասնակիցների ընդհանուր սեփականությունը:

3.2. Կառավարիչը Ֆոնդի ակտիվները ներդնում է օրենսդրությամբ և Կանոններով սահմանված սահմանափակումներին համապատասխան:

3.3. Ֆոնդի ներդրումային նպատակը միավոր ռիսկի դիմաց հավելյալ եկամտի ստացումն է:

3.4. Ֆոնդի ակտիվները առավելապես ներդրվում են միջազգային կարգավորվող շուկաներում (որպես հիմնական շուկաներ դիտարկվում են Նյու Յորքի ֆոնդային բորսան (New York Stock Exchange) և Նասդաքը (Nasdaq Stock Exchange)) ցուցակված/շրջանառվող իրացվելի արժեթղթերում՝ բաժնետոմսերում, պարտատոմսերում, բորսայում շրջանառվող ֆոնդերում (Exchange Traded Funds, ETF), ածանցյալ գործիքներում: Նշված գործիքներից յուրաքանչյուրի

պարագայում ներդրման առավելագույն չափը կարող է հասնել մինչև ընդհանուր ակտիվների 100 տոկոսին:

3.5. Ֆոնդի ներդրումային քաղաքականությունը կենտրոնացած է տատանողականության վրա հիմնված առևտրի (volatility trading) վրա: Դրա ներքո ֆոնդը հիմնականում օգտագործում է տատանողականության ինդեքսների (հիմնականում՝ Չիկագոյի օպցիոնների բորսայի տատանողականության ինդեքսի՝ VIX) վրա հիմնված բորսայական գործիքներ, այդ թվում՝ բորսայում շրջանառվող ֆոնդեր (Exchange Traded Funds, ETF), ինդեքսների վրա հիմնված պարտատոմսեր (Exchange Traded Notes, ETN) և այլ նմանատիպ պրոդուկտներ, ինդեքսային ածանցյալներ:

3.6. Ֆոնդն իր ներդրումային նպատակներին հասնելու համար կարող է օգտագործել լեվերիջ և ածանցյալ գործիքներ: Ֆոնդի հաշվին կարող են ներգրավվել և տրամադրվել փոխառու միջոցներ, կնքվել ռեպո և հակադարձ ռեպո գործարքներ: Սույն կետով սահմանված գործիքների ընդհանուր լեվերիջի առավելագույն մակարդակը սահմանվում է զուտ ակտիվների արժեքի 500%-ի չափով:

3.7. Ածանցյալ գործիքները օգտագործվում են ինչպես լրացուցիչ եկամուտ ստանալու, այնպես էլ լեվերիջի նպատակով: Եկամուտ ստանալու նպատակով ածանցյալների կիրառումը հիմնականում հիմնված է վաճառքի (փութ) օպցիոնների վաճառքի և ֆոնդի ակտիվներում ներառված ակտիվի գծով գնման (քոլ) օպցիոնների վաճառքի ռազմավարության վրա: Ընդ որում գնման (քոլ) օպցիոնների ընդհանուր ծավալը չի կարող գերազանցել ֆոնդի ակտիվների 50%-ը:

3.8. Կարճ վաճառքների ընդհանուր ծավալը չի կարող գերազանցել ֆոնդի ակտիվների արժեքի 45%-ը:

3.9. Իր ռազմավարության շրջանակներում ֆոնդը առավելապես օգտագործում է ստանդարտացված ածանցյալ գործիքներ: Ոչ ստանդարտացված ածանցյալ գործիքները կարող են կիրառվել հեջավորման նպատակով:

3.10. Ֆոնդի ներդրումները հիմնականում իրականացվում են ԱՄՆ դոլարով:

4. Ֆոնդում ներդրումների հետ կապված ռիսկերը

4.1. Ֆոնդի փայերում կատարվող ներդրումն ուղեկցվում է մի շարք ռիսկերով, որոնք կարող են ազդել Ֆոնդի եկամտաբերության և փայերի արժեքի վրա՝

(ա) **Շուկայական ռիսկ՝** Արժեթղթերի կամ այլ ակտիվների շուկայական գների աճի կամ նվազեցման ազդեցության ռիսկն է Ֆոնդի ակտիվների արժեքի վրա, ընդ որում, ռեպո, հակադարձ ռեպո և արժեթղթերով փոխառուական գործարքների դեպքում շուկայական գների տատանումը կարող է բազմակի ազդեցություն ունենալ Ֆոնդի ակտիվների արժեքի վրա:

(բ) **Վարկային ռիսկ՝** Ֆոնդի ակտիվներում ընդգրկված Արժեթղթի թողարկողի կամ Ֆոնդի հաշվին իրականացված որևէ գործարքի մյուս կողմի իր պարտավորությունները լրիվ կամ մասնակի չկատարելու ռիսկն է:

(գ) **Հաշվարկային ռիսկ՝** Արժեթղթերի կամ ակտիվների հաշվարկային համակարգում գործարքի ժամանակին կամ ամբողջությամբ չկատարվելու ռիսկն է՝ պայմանավորված գործարքի մյուս կողմի իր պարտավորությունները ժամանակին կամ ամբողջությամբ չկատարելու հանգամանքով:

(դ) **Իրացվելիության ռիսկ՝** Ֆոնդի ակտիվները ժամանակին և սահմանված արդարացի գնով իրացնելու կամ պարտավորությունները ժամանակին և պատշաճ կատարելու անհնարինության ռիսկն է:

(ե) **Արտարժութային ռիսկ՝** արտարժույթի կուրսի փոփոխություններով պայմանավորված ներդրման արժեքի անցանկալի ուղղությամբ փոփոխության ռիսկն է: Այս ռիսկն առաջանում է, երբ ֆոնդի ակտիվները ներդրվում են ԱՄՆ դոլարից տարբեր այլ արժույթով արտահայտված գործիքներում:

(զ) **Թողարկողի ռիսկ (Արժեթղթերի գնային ռիսկ)՝** առանձին Սրժեթղթի գնի անցանկալի ուղղությամբ փոփոխության ռիսկն է թողարկողի հետ կապված անբարենպաստ հանգամանքների ի հայտ գալով պայմանավորված (օրինակ՝ կառավարման սխալների պատճառով):

(ը) **Գնաճի (ինֆլյացիոն) ռիսկ՝** գնաճի (ինֆլյացիայի) պատճառով ներդրումների իրական արժեքի նվազման ռիսկն է:

(թ) **Քաղաքական ռիսկ՝** ներդրումների արժեքի վրա հնարավոր զգալի ազդեցություն ունեցող անբարենպաստ զարգացումների կամ իրադարձությունների ի հայտ գալու ռիսկն է այն երկրներում, որտեղ ներդրվում են Ֆոնդի ակտիվները (օրինակ՝ իրավական միջավայրի փոփոխությունը):

(ժ) **Իրավական ռիսկ՝** Ֆոնդի գործունեության բնագավառում օրենսդրության փոփոխության ռիսկն է, այդ թվում՝ արժեթղթերի շուկան կարգավորող և հարկային օրենսդրությունների փոփոխությունները:

(ի) **Գործառնական ռիսկ՝** Ֆոնդի կառավարման գործընթացներում կորստի հնարավորությունն է պայմանավորված ներքին գործընթացների ոչ համարժեքությամբ, ծրագրային և տեխնիկական համակարգերի խափանմամբ, մարդկային գործոնով կամ արտաքին ազդեցություններով:

4.2. Վերը նշված ռիսկերը նվազեցնելու նպատակով ձեռք է բերվում բավարար տեղեկատվություն այն ակտիվների վերաբերյալ, որոնցում ներդրվել կամ ներդրվում են Ֆոնդի ակտիվները, Ֆոնդի ներդրումները դիվերսիֆիկացվում են, օգտագործվում են ածանցյալ գործիքներ հեջավորման նպատակով, նախապատվությունը տրվում է ցածր վարկային ռիսկ ունեցող գործընկերներին, գործարքներն հիմնականում իրականացվում են կարգավորվող շուկաներում, որտեղ գործում է «առաքում՝ վճարման դիմաց» սկզբունքը:

5. Ֆոնդում մասնակցությունը: Ֆոնդի փայերը և դրանց ձեռքբերման կարգը

5.1. Ֆոնդի մասնակից (փայատեր) կարող է դառնալ ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, բացառությամբ այն անձի, որը որևէ կերպ (այդ թվում՝ իրավաբանական անձի կառավարման մարմինների գործող անդամները) առնչություն է ունեցել փողերի լվացման, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման, ահաբեկչության ֆինանսավորման հետ կամ ներառված է ՀՀ ԿԲ կողմից ներկայացված, OFAC, EU, HMT, ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ցանկերում:

5.2. Ֆոնդի թողարկած փայերը, կարող են ձեռք բերել միայն՝

ա. որակավորված ներդրողները 25,000 (քսանհինգ հազար) ԱՄՆ դոլարից սկսած և (կամ)

բ. այն ներդրողները, որոնցից յուրաքանչյուրի կողմից ձեռք բերվող փայի (բաժնետոմսի) գնման գինը (յուրաքանչյուր առանձին առաջարկի դեպքում ձեռք բերվող փայերի (բաժնետոմսերի) ընդհանուր արժեքը) գերազանցում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված մեծությունը՝ 20 մլն. ՀՀ դրամին համարժեք ԱՄՆ դոլարը:

5.3. 5.2. կետի ա. և բ.ենթակետերով սահմանված մասնակիցները հնարավորություն ունեն հայտը ներկայացնելուց հետո գումարի համալրումը իրականացնել մեկ տարվա ընթացքում մասնաբաժիններով:

Ընդ որում յուրաքանչյուր մասնաբաժնի արժեքը չի կարող պակաս լինել 10,000 (տասը հազար) ԱՄՆ դոլարից:

5.4. Մասնաբաժիններով ներդրման պարագայում, յուրաքանչյուր մասնաբաժնի համար տրամադրվող փայի արժեքը որոշվում է գումարը համալրելուն հաջորդող օրվա փայի հաշվարկային արժեքով:

5.5. Մեկ տարվա ընթացքում 5.2 կետով սահմանված գումարը չապահովելու պարագայում, փայերը ենթակա են մարման՝ 6.4 կետի համաձայն:

5.6. Փայը էլեկտրոնային գրանցում ունեցող Արժեթուղթ է: Փայերը հաշվառվում են գրանցման ձևով և որևէ փայի հավաստագիր չի թողարկվում (փայերը՝ ոչ թղթային են):

5.7. Փայը Մասնակցին Ֆոնդի ակտիվներով իրականացվող գործարքների վերաբերյալ որոշումներ կայացնելու իրավունք չի տրամադրում: Մասնակիցների ընդհանուր ժողով չի գումարվում, այսինքն՝ Մասնակիցը ժողովների միջոցով չի կարող մասնակցել Ֆոնդի կառավարմանը: Մասնակիցը չի կարող պահանջել Ֆոնդի ակտիվներից իր մասնաբաժնի առանձնացում:

5.8. Փայերի թողարկումն ու տեղաբաշխումն իրականացնում է Կառավարիչը: Փայերը տեղաբաշխվում է հրապարակային առաջարկի միջոցով:

5.9. Ֆոնդի փայն առաջին թողարկման ժամանակ ունի անվանական արժեք: Ֆոնդի մեկ փայի անվանական արժեքը կազմում է 1,000 (մեկ հազար) ԱՄՆ դոլար: Փայի տեղաբաշխման ավարտից հետո փայի արժեքը որոշվում է հաշվարկային արժեքի համաձայն:

5.10. Մեկ փայի հաշվարկային արժեքը որոշվում է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի (վերջին հաշվարկի համաձայն) և Ֆոնդի տեղաբաշխված և չմարված (հետ չգնված) փայերի քանակի հարաբերությամբ:

5.11. Փայը բաժանելի է: Փայի կոտորակային մասերը կլորացվում են ստորակետից հետո չորրորդ

նիշի ճշտությամբ:

5.12. Ֆոնդը թողարկում է միայն մեկ դասի փայեր:

5.13. Մասնակիցը կարող է ցանկացած աշխատանքային օր ձեռքբերել լրացուցիչ փայեր, ընդ որում՝ յուրաքանչյուր մասնակցի կողմից ձեռքբերվող լրացուցիչ փայերի ընդհանուր արժեքը չի կարող պակաս լինել 10,000 (տասը հազար) ԱՄՆ դոլարից:

5.14. Առաջին (սկզբնական) թողարկման ժամանակ փայերը տեղաբաշխվում են փայի անվանական արժեքով: Մնացած բոլոր դեպքերում փայի տեղաբաշխման համար հիմք է ընդունվում դիմումի ներկայացման օրվան հաջորդող օրվա դրությամբ հաշվարկվող փայի հաշվարկային արժեքը: Ընդ որում եթե այդ օրվան նախորդող օրը ԱՄՆ կարգավորվող շուկաների համար ոչ աշխատանքային օր է, ապա փայի տեղաբաշխման համար հիմք է ընդունվում հաջորդ աշխատանքային օրվա դրությամբ հաշվարկվող փայի հաշվարկային արժեքը:

5.15. Ֆոնդը կարող է թողարկել անսահմանափակ թվով փայեր: Թողարկվող փայերի ծավալն ու քանակը ֆիքսված չէ:

5.16. Թողարկվող փայերի քանակը որոշվում է ներդրման համար վճարված գումարի և մեկ փայի արժեքի հարաբերությամբ:

5.17. Փայի տեղաբաշխման վճար չի սահմանվում:

5.18. Մասնակից դառնալու (առաջին անգամ Ֆոնդի փայ ձեռքբերելու) համար անձը դիմում է ներկայացնում Կառավարչին: Մասնակից հանդիսացող անձի կողմից լրացուցիչ փայերի ձեռքբերման համար ներկայացվում է լրացուցիչ դիմում:

5.19. Ձեռքբերման հայտը ներառում է Մասնակցի անհատական տվյալների, կոնտակտային տվյալների, տեղեկատվություն ստանալու նախընտրելի միջոցների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը, որի ամբողջական ցանկը սահմանված է Ռեեստրավարման Կանոնակարգով:

5.20. Դիմումի մեջ, ի թիվս այլ տեղեկությունների, նշվում է գումարը, որն անձը ցանկանում է ներդնել Ֆոնդում:

5.21. Դիմումը ներկայացնելով անձը հավաստիացնում է, որ ծանոթացել է Կանոններին, և ընդունում է դրանք:

5.22. Դիմումին կից անձը ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ երբևէ որևէ կերպ առնչություն չի ունեցել փողերի լվացման, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հետ:

5.23. Մասնակցության դիմումին զուգահեռ դիմումատուն ներդրվող գումարը ապահովում է համապատասխան տարանցիկ հաշվեհամարին: Ընդ որում փայերի տեղաբաշխման տեսանկյունից դիմումի ներկայացման օր է համարվում՝ դիմումի ներկայացման և գումարի ապահովման օրերից վերջինը:

5.24. Եթե անձը Կանոններով սահմանված կարգով ներկայացրել է դիմումը և կից փաստաթղթերը, ապա Կառավարիչը պարտավոր է դիմումը ստանալու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում՝

ա) որոշում կայացնել դիմումատուի մասնակցությունը հաստատելու կամ մերժելու վերաբերյալ, և

բ) այդ մասին գրավոր տեղեկացնել դիմումատուին:

5.25. Կառավարիչն իրավունք ունի մերժել փայերի ձեռք բերման վերաբերյալ ներկայացված Ձեռքբերման հայտը, եթե ներդրողը չի տրամադրել Կառավարչի ներքին կանոններով և կանոնակարգերով սահմանված անհրաժեշտ տեղեկատվությունը: Մերժման պարագայում դիմումատուի կողմից ապահովված միջոցները վերադարձվում են այն հաշվեհամարին, որից իրականացվել է փոխանցումը: Ընդ որում փոխանցման միջնորդավճարները իրականացվում են դիմումատուի միջոցների հաշվին:

6. Փայերի հետգնումը (մարումը) և միջոցների վերադարձը

6.1. Իրեն պատկանող ֆոնդի փայերը մարելու համար մասնակիցը պետք է դիմի Կառավարչին՝ նշելով մարման ենթակա փայերի քանակը և բանկային հաշվի տվյալները:

6.2. Փայերի մարումն իրականացվում է յուրաքանչյուր աշխատանքային օր:

6.3. Փայերի հետգնման (մարման) վճար չի գանձվում, բացառությամբ Կանոնների 6.4 կետով նախատեսված դեպքի:

6.4. Եթե ներդրման (փայերի ձեռքբերման) օրվանից անցել է 12 ամսից պակաս ժամանակ, ապա փայի մարման դեպքում գանձվում է 2 (երկու) տոկոս մարման վճար, որը հաշվարկվում է փայի հաշվարկային արժեքի նկատմամբ և վճարվում է Կառավարչին:

6.5. Բացառիկ դեպքերում, երբ չկան ներդրումային հնարավորություններ Ֆոնդի միջոցների ներդրման համար, կառավարիչն իրավունք ունի համապատասխան գումարի չափով համամասնորեն մարելու մասնակիցների փայերը՝ նախապես այդ մասին տեղեկացնելով Ֆոնդի մասնակիցներին:

6.6. Փայերի մարման համար հիմք է ընդունվում դիմումի ներկայացման օրվան հաջորդող օրվա դրությամբ հաշվարկվող փայի հաշվարկային արժեքը: Ընդ որում եթե այդ օրվան նախորդող օրը ԱՄՆ կարգավորվող շուկաների համար ոչ աշխատանքային օր է, ապա փայի մարման համար հիմք է ընդունվում հաջորդ աշխատանքային օրվա դրությամբ հաշվարկվող փայի հաշվարկային արժեքը:

6.7. Փայերի մարման արդյունքում ստացված դրամական միջոցները փոխանցվում են ներդրողի բանկային հաշվին փայերի մարման օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

6.8. Փայի մարումն իրականացնելու օրը մարված փայը դուրս է գրվում ռեեստրից և դրանով ամրագրված իրավունքներն ու պարտականությունները դադարում են:

6.9. Կառավարիչը կարող է ժամանակավորապես (առավելագույնը 3 ամիս) կասեցնել փայերի հետգնումը (մարումը)՝ այդ մասին տեղեկացնելով Ֆոնդի մասնակիցներին, եթե առկա է հետևյալ հիմքերից որևէ մեկը՝

ա) կարգավորվող շուկաների (բորսաների) բնականոն գործունեության դադարում կամ շուկայի ձախողումներ (այդ թվում՝ գործարքների կնքման սահմանափակումների կիրառում), որն էլ անհնար է դարձնում Ֆոնդի ակտիվների արժեքի ճշգրիտ որոշումը կամ ֆոնդի ակտիվների վաճառքը.

բ) գործառնական խնդիրների կամ տեխնիկական ձախողումների առաջացում, որոնք կարող են ժամանակավորապես խոչընդոտել ֆինանսական շուկաներում գործառնությունների իրականացումը, ուստի՝ ազդել Ֆոնդի ակտիվների շուկայական արժեքի վրա.

գ) իրացվելիության խնդիրների առաջացում, երբ Ֆոնդում առկա դրամական միջոցները բավարար չեն փայերի հետգնման (մարման) համար, և ֆոնդի ակտիվները կարող են վաճառվել զգալի կորուստներով.

դ) բնական աղետների կամ այլ գործոնների ի հայտ գալը, որոնք անհնար են դարձնում Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի որոշումը, Ֆոնդի ակտիվների գնահատումը, տնօրինումը և (կամ) դրանց գծով եկամուտների ստացումը:

6.10. Կառավարիչը նախապես տեղեկացնում է Կենտրոնական Բանկին և Պահառուին փայերի մարման կասեցման և դրա պատճառների վերաբերյալ:

6.11. Կենտրոնական Բանկի պահանջով Կառավարիչը պարտավոր է կասեցնել փայերի մարումը, եթե դա անհրաժեշտ է Մասնակիցների օրինական շահերը պաշտպանելու համար:

6.12. Կառավարիչը հայտարարություն է հրապարակում փայերի մարման կասեցման վերաբերյալ առնվազն 3000 տպաքանակով հանրապետական տարածում ունեցող մամուլում և իր ինտերնետային տնային էջում:

6.13. Փայերը մարելիս Կառավարիչն առաջնորդվում է «առաջինը մուտք, առաջինը ելք» սկզբունքով, ինչը նշանակում է, որ առաջին հերթին մարվում են ամենավաղ ձեռքբերված փայերը:

7. Մասնակիցների իրավունքները և պարտականությունները

7.1. Մասնակիցներն ունեն փայերի տիրապետումից բխող հետևյալ իրավունքները՝

(ա) փայը օտարել այլ անձին կամ ներկայացնել հետգնման՝ Կանոններով սահմանված կարգով,

(բ) ժառանգել փայը,

(գ) Ֆոնդի դադարեցման դեպքում ակտիվների մնացորդից ստանալ իր կողմից տնօրինվող փայի քանակին համապատասխան մասնաբաժինը,

(դ) պահանջել իր կողմից ձեռքբերված փայի նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող փայի հավաստագիր,

(ե) համապատասխան պահանջի ներկայացումից 10 աշխատանքային օրվա ընթացքում ստանալ տեղեկատվություն Կառավարչի կողմից Ֆոնդում ներառված արժեթղթերից բխող իրավունքների իրականացման վերաբերյալ,

(զ) ստանալ Կանոններով նախատեսված տեղեկություններ ֆոնդի և ֆոնդի փայերի վերաբերյալ,

(է) իրականացնել Կանոններով սահմանված այլ գործողություններ:

7.2. Մասնակցի համար փայերով հավաստվող իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում փայերի թողարկման պահից և դադարում են փայերի մարման պահից: Փայը

համարվում է թողարկված մասնակիցների ռեեստրում գրանցում կատարելու պահից և համարվում է մարված մասնակիցների ռեեստրից դուրս գրվելու պահից սկսած: Փայերի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է ռեեստրում գրառում կատարելու պահից:

7.3. Մասնակիցը փայով ամրագրված իրավունքները պետք է իրականացնի բարեխղճորեն և օրենսդրությանը և Կանոններին համապատասխան:

7.4. Մասնակիցն անձամբ պատասխանատու չէ կառավարչի կողմից Ֆոնդի անունից ստանձնած պարտավորությունների համար, ինչպես նաև այն պարտավորությունների համար, որոնց կատարումը Կառավարիչն իրավունք ունի պահանջել Ֆոնդից Կանոններին համապատասխան: Մասնակցի պատասխանատվությունը սահմանափակվում է Ֆոնդի ակտիվներում իր ունեցած փայի արժեքով:

7.5. Կառավարիչը չի կարող ստանձնել պարտավորություններ մասնակցի անունից:

7.6. Ֆոնդի ժողով չի գումարվում, այսինքն՝ Ֆոնդի մասնակիցները ժողովների միջոցով չեն մասնակցում Ֆոնդի կառավարմանը, այդ թվում՝ Ֆոնդի ակտիվներով իրականացվող գործարքների վերաբերյալ որոշումների կայացմանը:

7.7. Մասնակիցը չի կարող պահանջել Ֆոնդի ակտիվներից իր մասնաբաժնի առանձնացում:

8. Կառավարչի իրավունքները և պարտականությունները

8.1. Կառավարչի գործունեության հիմքերը սահմանվում են Կառավարչի կանոնադրությամբ, Կանոններով և օրենսդրությամբ:

8.2. Կառավարիչն իրավունք ունի Կանոնների և օրենսդրության շրջանակներում իր հայեցողությամբ կառավարել Ֆոնդի ակտիվները, իրականացնել Ֆոնդի կառավարման համար անհրաժեշտ ադմինիստրատիվ և այլ գործողություններ:

8.3. Իր գործառույթների արդյունավետ իրականացման նպատակով Կառավարիչն իրավունք ունի կնքել պայմանագրեր այլ անձանց հետ, պատվիրակել իր գործառույթների մի մասն այլ անձանց: Այլ անձանց գործառույթների պատվիրակման դեպքում կառավարիչը շարունակում է պատասխանատվություն կրել պատվիրակված գործառույթների պատշաճ կերպով և բարեխղճորեն իրականացման համար:

8.4. Կառավարիչն իրավունք ունի այլ անձանց պատվիրակել հետևյալ գործառույթները՝

(ա) Ֆոնդի ակտիվներով ներդրումների իրականացումը (ՀՀ ԿԲ նախնական համաձայնության պարագայում),

(բ) մասնակիցների ռեեստրի վարումը,

(գ) Ֆոնդի ակտիվների գնահատումը, զուտ ակտիվների արժեքի, փայի հաշվարկային արժեքի հաշվարկը,

(դ) Ֆոնդի հաշվապահական հաշվառման վարումը,

(ե) կառավարչական այլ գործառույթներ:

8.5. Կառավարիչն իր անունից Ֆոնդի հաշվին գործարքներ է իրականացնում (այդ թվում՝ Ֆոնդի ակտիվներով ներդրումների իրականացում)՝ նշելով, որ ինքը հանդես է գալիս որպես Ֆոնդի կառավարիչ:

8.6. Կառավարիչը ներդնում է Ֆոնդի ակտիվները Կանոններով սահմանված ներդրումային քաղաքականությանը համապատասխան:

8.7. Կառավարիչը Ֆոնդի ակտիվները կառավարում է իր սեփական ակտիվներից և կառավարչի կողմից կառավարվող այլ ֆոնդերի ակտիվներից ու ակտիվների համախմբերից առանձին: Ֆոնդի ակտիվները չեն ներառվում կառավարչի լուծարային գույքի կազմում և կառավարչի պարտատերերի պահանջները չեն կարող բավարարվել այդ ակտիվների հաշվին:

8.8. Կառավարիչն իրավունք ունի ձեռքբերել Ֆոնդի փայեր:

8.9. Կառավարիչը պարտավոր է Ֆոնդի կառավարման իր պարտականությունների կատարման ընթացքում գործել՝ ելնելով Ֆոնդի մասնակիցների շահերից, իրականացնել իր իրավունքները և կատարել իր պարտականությունները բարեխղճորեն ու ողջամիտ կերպով, պատշաճ մասնագիտական մակարդակով:

8.10. Կառավարչի՝ Կանոններով նախատեսված պարտավորությունների կատարման վրա կարող են ազդել շուկայի խափանումները, այդ թվում՝ կարգավորվող շուկաների (բորսաների) չկանխատեսված փակումները, աշխատանքի չպլանավորված ընդհատումները, կարգավորվող շուկաների, բորսաների, բանկային համակարգի, վճարահաշվարկային համակարգի բնականոն աշխատանքի խափանումները (այդ թվում նաև տեխնիկական), ինչպես նաև անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով առաջացած դեպքերը: Վերոնշյալ դեպքերի ի հայտ գալու դեպքում Կառավարիչը պատասխանատվություն չի կրում այն խախտումների համար, որոնք ի հայտ են եկել վերոնշյալ իրադարձությունների հետևանքով:

9. Պահառուի գործունեությունը

9.1. Պահառուն ի պահ է ընդունում և հաշվառում Ֆոնդի ակտիվները և իրականացնում է օրենսդրությամբ իրեն վերապահված այլ պարտականություններ:

9.2. Պահառուն իրավունք ունի պայմանագրեր կնքել Ֆոնդի ակտիվների պահառությունը, դրանց հետ կապված գործառնությունների և Պահառուի այլ պարտականությունների իրականացումը երրորդ անձանց պատվիրակելու նպատակով՝ Պահառության պայմանագրով սահմանված կարգով: Պահառուն Ֆոնդի ակտիվների պահառության նպատակով երրորդ անձանց ընտրությունը կատարում է պատշաճ ուսումնասիրությամբ երրորդ անձի վստահելիությունն ապահովելու նպատակով, հատկապես արտասահմանյան Արժեթղթերի դեպքում կամ այն դեպքերում, երբ առավել արդյունավետ է երրորդ անձանց ծառայություններից օգտվելը: Նախքան պարտականությունների փոխանցումը և դրանից հետո Պահառուն ստուգում է երրորդ անձի կազմակերպչական և վարչատեխնիկական մակարդակի և նրա ֆինանսական վիճակի բավարարությունը պայմանագրում սահմանված պարտականությունների կատարմանը:

9.3. Պահառուի կողմից Ֆոնդի ակտիվների պահառությունը երրորդ անձանց պատվիրակելու դեպքում Ֆոնդին կամ Մասնակիցներին ուղղակիորեն հասցված վնասների համար պատասխանատվություն է կրում Պահառուն, եթե վերջինս Ֆոնդի ակտիվների պահառություն իրականացնող երրորդ անձանց ընտրությունը կատարել է ոչ պատշաճ ուսումնասիրությամբ կամ ձախողել է նրանց նկատմամբ վերահսկողության իրականացումը:

9.4. Պահառուի գործունեությունը կարգավորվում է «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև դրանց հիման վրա ընդունված ՀՀ Կենտրոնական բանկի և այլ նորմատիվ իրավական ակտերով, սույն Կանոններով, ինչպես նաև Պահառուի և Ֆոնդի կառավարչի միջև կնքված Պայմանագրով/Համաձայնագրերով և Պահառուի ներքին կարգերով:

10. Փայերի ռեեստրը

10.1. Ֆոնդի փայերի սեփականության իրավունքը և Մասնակիցների ու Կառավարչի համար Ֆոնդի փայերի տիրապետումից առաջացող իրավունքներն ու պարտականությունները ծագում են Ռեեստրում գրանցում կատարելու պահից (այսինքն՝ Մասնակիցների համար Ռեեստրում բացված հաշիվներում փայերի գրանցման պահից): Մասնակիցը, փայերով գործարքներ իրականացնելու մտադրության մասին հայտարարելով, համաձայնություն է տալիս իրեն վերաբերող տեղեկատվության(ներառյալ անձնական տվյալները) օգտագործմանը՝ Ռեեստրի վարման անհրաժեշտության շրջանակներում: Մասնակիցն իրավունք ունի հիմնվել Ռեեստրում կատարված գրանցումների վրա իր իրավունքներն իրականացնելիս և երրորդ անձանց նկատմամբ իր պարտականությունները կատարելիս:

10.2. Ռեեստրում ներառված տեղեկատվությունը պահպանվում է էլեկտրոնային եղանակով:

10.3. Ռեեստրավարը Ռեեստրում գրանցումները կատարում է՝ հիմնվելով Ֆոնդի փայերով իրականացված գործառնությունների տեղեկատվության վրա: Գրանցումներ կարող են կատարվել նաև դատարանի որոշման կամ օրենքով, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով կամ Ռեեստրավարի կանոններով նախատեսված դեպքերում:

10.4. Ռեեստրավարի կողմից գրանցումներ կատարելու համար ընդունված տեղեկատվությունն ու փաստաթղթերը պահպանվում են օրենսդրությամբ և ռեեստրավարի կանոնակարգով սահմանված ժամկետով: Տեղեկատվությունը պահպանվում է փաստաթղթային տեսքով կամ այնպիսի ձևով, որը կարող է գրավոր վերարտադրվել:

11. Ֆոնդի մասնակիցներին տեղեկությունների տրամադրումը

11.1. Կառավարչի ինտերնետային տնային էջում հասանելի են առնվազն հետևյալ տեղեկություններն ու փաստաթղթերը՝

(ա) Կանոնները,

(բ) Ֆոնդի ֆինանսական հաշվետվությունները (առնվազն վերջին տարեկան և

եռամսյակային հաշվետվությունները) և տարեկան հաշվետվությունների վերաբերյալ անկախ աուդիտորի եզրակացությունը: Ընդ որում՝ ֆինանսական հաշվետվություններն ու անկախ աուդիտորի եզրակացությունը նաև ենթակա են հրապարակման «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով սահմանված ինտերնետային կայքում:

(գ) Կառավարչի անվանումը և կոնտակտային տվյալները,

(դ) Կառավարիչի կազմում կամ անունից ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց անունները,

(ե) Պահառուի անվանումը և կոնտակտային տվյալները,

(զ) տեղեկատվություն Ֆոնդում Կառավարչի մասնակցության չափի վերաբերյալ

(է) Կառավարչի և յուրաքանչյուր ֆոնդի կանոնադրությունը (կանոնները), դրանցում կատարված փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև Կառավարչի Ֆոնդի Կառավարման ներքին կանոններն ու կարգերը:

(ը) տեղեկություններ կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց, կառավարչի ղեկավարների, ինչպես նաև ղեկավարների լիազորությունների և պատասխանատվության ոլորտների վերաբերյալ:

(թ) տեղեկատվություն ֆոնդի փայերի հաշվարկային արժեքի, տեղաբաշխման և հետգնման գների վերաբերյալ

11.2. Կառավարիչը կազմակերպում է Ֆոնդի հաշվապահական հաշվառումը: Կառավարիչը ապահովում է Ֆոնդի առանձնացված հաշվառումը Կառավարչի և այլ Ֆոնդերի հաշվապահական հաշվառումից: Ֆոնդի տարեկան հաշվետվությունները հրապարակվում են Ֆոնդի ֆինանսական տարվա ավարտից հետո ոչ ուշ, քան 4 ամսվա ընթացքում, իսկ եռամսյակային հաշվետվությունները հրապարակվում են մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա վերջին աշխատանքային օրը: Ֆոնդի համար ֆինանսական տարի է հանդիսանում Կառավարչի ֆինանսական տարին: Կառավարչի ֆինանսական տարին սկսվում է հունվարի 1-ով, ավարտվում՝ դեկտեմբերի 31-ով:

11.3. Կառավարիչը հրապարակում է իր կողմից կառավարվող Ֆոնդերի (ներառյալ Ֆոնդի) ֆինանսական վիճակի կամ փայի հաշվարկային արժեքի վրա էական ազդեցություն ունեցող պայմանների վերաբերյալ տեղեկատվությունն առնվազն իր ինտերնետային տնային էջում: Ֆոնդի գովազդն իրականացվում է «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով և օրենսդրության այլ դրույթներին համապատասխան:

11.4. Ֆոնդի կառավարչի և մասնակիցների միջև հաղորդակցության նախընտրելի տարբերակը էլեկտրոնային փոստն է:

11.5. Կառավարիչն իրավունք ունի Ֆոնդի վերաբերյալ տեղեկություններ և հաշվետվություններ ուղարկել Մասնակիցների իրեն հայտնի փոստային կամ էլեկտրոնային հասցեներով:

11.6. Կանոնների փոփոխությունները և Կանոններով նախատեսված՝ մասնակիցներին տրամադրման ենթակա այլ տեղեկությունները մասնակիցներին են ներկայացվում նրանց կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեներով:

11.7. Կառավարիչը Ֆոնդի փայերի հաշվարկային արժեքի մասին տեղեկացնում է մասնակիցներին իր ինտերնետային կայքում հրապարակման միջոցով: Յուրաքանչյուր աշխատանքային օրվա դրությամբ Ֆոնդի փայերի հաշվարկային արժեքը հրապարակվում է մինչև տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրվա վերջը:

12. Զուտ ակտիվների արժեքը

12.1. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը հաշվարկվում է յուրաքանչյուր աշխատանքային օր:

12.2. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը որոշվում է Ֆոնդի ակտիվների շուկայական արժեքի հիման վրա՝ դրանից Ֆոնդի ստանձնած պարտավորությունները (Ֆոնդի նկատմամբ պահանջները) նվազեցնելու միջոցով: Մասնավորապես, Ֆոնդի ակտիվների շուկայական արժեքից նվազեցվում են հետևյալ պարտավորությունները (պահանջները)՝

(ա) Ֆոնդի կողմից մասնակիցներին վճարման ենթակա գումարները՝ ներկայացված հետգնման (մարման) պահանջների մասով,

(բ) Ֆոնդի հաշվին ներգրավված վարկերի (փոխառությունների) գումարները,

(գ) Կանոնների 17.1 կետով նախատեսված ծախսերը և վճարները:

12.3. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը հաշվարկելուց հետո որևէ էական իրադարձության կամ հանգամանքի տեղի ունենալու կամ ի հայտ գալու դեպքում, որը Կառավարչի լավագույն մասնագիտական կարծիքով էականորեն ազդում է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի վրա, Կառավարիչը կարող է վերագնահատել Ֆոնդի կամ փայի հաշվարկված զուտ ակտիվների արժեքը, եթե վերագնահատման չիրականացմամբ կվնասվեին Մասնակիցների շահերը:

12.4. Ոչ իրացվելի կամ գնանշում չունեցող ակտիվների գնահատումը կատարվում է դրանց իրական արժեքով:

12.5. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման համար, միջազգային շուկաներում տեղաբաշխված միջոցների պարագայում՝ հիմք է ընդունվում ֆոնդին սպասարկող բրոքերային ընկերության կողմից տրամադրված գները:

12.6. Որպես եկամտաբերության համեմատման գործիք ներդրողների համար առաջարկվում է ուղենիշ (benchmark): Որպես ուղենիշ վերցվում է HFRI 500 fund weighted composite index: Ուղենիշի առկայությունը չի ենթադրում դրան համապատասխան ներդրումների իրականացման կամ սպասվելիք կամ խոստացված եկատմաբերության ապահովման խոստում: Մասնակիցն իրավունք չունի, վկայակոչելով սույն կանոնին համապատասխան հրապարակված ուղենիշը, Կառավարչից պահանջել վնասների հատուցում կամ նրա նկատմամբ պատասխանատվության որևէ միջոցի կիրառում: Այն իրենից ներկայացնում է որոշակիորեն համեմատելի ցուցանիշների ամբողջություն, որն իր ներդրումային բնութագրիչներով (ռիսկ, ժամկետայնություն, իրացվելիություն և այլն) առավելագույնս համապատասխանում է տվյալ դասի փայի ներդրումային բնութագրիչներին:

13. Ֆոնդի ակտիվների գնահատումը

13.1. Բանկային հաշիվներում, դրամական միջոցների հաշվառման հաշիվներում առկա միջոցների և բանկային ավանդների (սույն գլխում այսուհետ՝ հաշիվ) արժեքը որոշվում է ֆոնդի կանոններով սահմանված կտրման պահի դրությամբ տվյալ հաշիվներում առկա մնացորդային գումարների և հաշվեգրված ու չստացված տոկոսագումարների հանրագումարով:

13.2. Արժեթղթերի գնահատումը իրականացվում է հետևյալ կարգով.

(ա) Կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված Արժեթուղթը գնահատվում է գնահատման օրը տվյալ Արժեթղթի փակման գնով, եթե այլ բան նախատեսված չէ Կանոններով:

(բ) Եթե Արժեթղթի համար վերոնշյալ 13.2.(ա) կետով սահմանված փակման գինը հասանելի չէ (առկա չէ), ապա այդ արժեթուղթը գնահատվում է տվյալ շուկայում գնահատման օրվա առևտրային նստաշրջանի փակման պահի դրությամբ գնման հայտերում նշված ամենաբարձր և վաճառքի հայտերում նշված ամենացածր գների միջին թվաբանականով:

(գ) Եթե Արժեթղթի համար փակման գինը և 13.2.(բ) կետով սահմանված գները հասանելի չեն (առկա չեն), ապա այդ Արժեթուղթը գնահատվում է դրա՝ գնահատման օրվան նախորդող վերջին հայտնի համապատասխան գնով, որը որոշվել է 13.2.(ա) և 13.2.(բ) կետերով սահմանված հաջորդականությամբ:

(դ) Եթե 13.2.(գ) կետով սահմանված դեպքում վերջին գործարքի կամ վերջին հայտնի գնի ամսաթվից հետո տեղի է ունեցել տվյալ Արժեթղթի հետ կապված որևէ էական իրադարձություն կամ ի հայտ է եկել որևէ էական փաստ կամ տեղեկություն, որը կարող է էապես ազդել տվյալ Արժեթղթի գնի վրա, ապա այդ կետի համաձայն որոշված գինը կարող է համապատասխանաբար ճշգրտվել Կառավարչի կողմից տվյալ Արժեթղթի շուկայական արժեքի գնահատման համար:

(ե) Առաջնային տեղաբաշխումից ձեռք բերված արժեթղթերը, մինչև դրանց Կարգավորվող շուկայում շրջանառումը, գնահատվում են հետևյալ կերպ՝

Կարգավորվող շուկայում տեղաբաշխվող արժեթղթերի դեպքում դրանց

ձեռքբերման գնով, իսկ դրա անհասանելիության դեպքում միջին կշռված գնով:

Կարգավորվող շուկայից դուրս տեղաբաշխվող արժեթղթերի դեպքում դրանց ձեռք բերման գնով:

(զ) Եթե սույն Կանոնների 13.2.(ա)-ից 13.2.(գ) կետերով սահմանված գները հասանելի չեն (առկա չեն) գնահատման օրվա դրությամբ վերջին 30 աշխատանքային օրերից ոչ մեկի համար, ապա Արժեթուղթը գնահատվում է դրա հնարավոր վաճառքի ողջամիտ գնով, որը որոշվել է բարեխղճորեն, ֆինանսների ոլորտում համընդհանուր ընդունված մեթոդների կիրառմամբ՝ անհրաժեշտության դեպքում հաշվի առնելով տվյալ Արժեթղթի ցածր իրացվելիության համար նվազեցումը և ՖՀՄՍ պահանջները:

13.3. Ածանցյալ գործիքների գնահատումը իրականացվում է հետևյալ կերպ.

(ա) Ստանդարտացված (կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված) ածանցյալ գործիքի արժեքը որոշվում է 13.2(ա)-ից 13.2(գ) կետերին համապատասխան,

(բ) Ոչ ստանդարտացված ածանցյալ գործիքների գնահատումն իրականացվում է Բաց դիրքի (երկար կամ կարճ) սպասվող շահույթների (վնասների) հիման վրա: Վերջինս որոշվում է ածանցյալ գործիքի հիմքում ընկած բազիսային ակտիվի գնահատման միջոցով, որն իրականացվում է համաձայն 13.2 կետով սահմանված հաջորդականությամբ:

13.4. Ժամկետանց Արժեթղթերի գնահատումը իրականացվում է հետևյալ կարգով.

(ա) Եթե թողարկողը չի կատարում Արժեթղթի գծով իր պարտավորությունները (այդ թվում՝ Արժեթղթի մարում, մասնակի մարում, արժեկտրոնի վճարում), ապա տվյալ Արժեթղթի գծով ստացվելիք գումարների գնահատման ժամանակ դրանք նվազեցվում են վճարման նախատեսված օրվան հաջորդող՝

(Ա) 90 օրվա ընթացքում 10 տոկոսի չափով՝ օրական կտրվածքով հավասարաչափ գումարի տեսքով,

(Բ) 91 օրից 180 օրվա ընթացքում 10 տոկոսի չափով՝ օրական կտրվածքով հավասարաչափ գումարի տեսքով,

(Գ) 181 օրից 270 օրվա ընթացքում 30 տոկոսի չափով՝ օրական կտրվածքովհավասարաչափ գումարի տեսքով,

(Դ) 271 օրից 360 օրվա ընթացքում մնացած 50 տոկոսի չափով՝ օրական կտրվածքով հավասարաչափ գումարի տեսքով:

(բ) Ժամկետանց դեբիտորական պարտքերի գնահատումն իրականացվում է վերոնշյալ 13.4(ա) կետին համապատասխան:

(գ) Ռեպո և հակադարձ ռեպո գործառնությունների արժեքը որոշվում է համաձայն ՖՀՄՍ կանոնների:

13.5. Ֆոնդի ակտիվների գնահատումն իրականացվում է յուրաքանչյուր Աշխատանքային օր:

14. Ֆոնդի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

14.1. Ֆոնդի հաշվապահական հաշվառումը վարվում է և ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են ՆՖՄ, ԱՇՄ, ՀՀՄ, ՖՀՄՍ և Կենտրոնական Բանկի կողմից ընդունված՝ ֆոնդերի հաշվապահական հաշվառմանը և հաշվետվությունների կազմմանը վերաբերող իրավական ակտերին համապատասխան:

14.2. Հաշվետու ժամանակաշրջան է համարվում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամանակաշրջանը՝ հաշվետու տարին (օրացուցային տարի), հաշվետու եռամսյակը (օրացուցային եռամսյակ) և հաշվետու օրը (Աշխատանքային օր), իսկ օրենքներով կամ Կենտրոնական Բանկի իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ նաև ամիսը կամ շաբաթը:

15. Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ

15.1. Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը Ֆոնդի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում պետք է ճանաչի միայն այն դեպքում, երբ Ֆոնդը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

15.2. Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է իր իրական արժեքով: Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանն ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները չեն ներառվում սկզբնական չափման մեջ, այլ՝ ճանաչվում են որպես ծախս շահույթում կամ վնասում:

15.3. Դրամական միջոցները, տրամադրած և ստացած փոխառությունները, դեբիտորական և կրեդիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

15.4. «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներնու ֆինանսական պարտավորությունները սկզբնական ճանաչումից հետո չափվում են իրական արժեքով: Իրական արժեքի փոփոխություններից օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

15.5. Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող», եթե կենտրոնական բանկի իրավական ակտերով այլ բան սահմանված չէ:

15.6. Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումն իրականացվում է «Ֆինանսական գործիքներ. Ճանաչումն ու չափումը» ՀՀՄՍ 39-ին համապատասխան: «Ֆինանսական գործիքներ» ՖՀՄՍ 9-ը վաղաժամ չի կիրառվում:

15.7. Տոկոսային եկամուտը, ներառյալ «իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվների գծով տոկոսային եկամուտըճանաչվում (հաշվեգրում) է ժամանակային համամասնության հիմունքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որն այն դրույքն է, որը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետի ընթացքում գնահատված ապագա դրամական ներհոսքերը ճշգրիտ կերպով զեղչում է մինչև այդ ակտիվի հաշվեկշռային արժեքը:

15.8. Կառավարչի պարգևավճարը հաշվարկվում և ճանաչվում է սույն Կանոններին համապատասխան:

15.9. Պահառուի պարգևավճարը հաշվարկվում և ճանաչվում է սույն Կանոններին համապատասխան: Պահառուական ծառայությունների հետ կապված սույն Կանոններով սահմանված բոլոր ծախսերը ճանաչվում են կատարման օրվա դրությամբ փաստացի ծախսի չափով:

15.10. Ֆոնդի կողմից վճարվելիք շահութահարկը որպես ծախս է ճանաչվում օրական (հարկվող շահույթի որոշման նպատակով Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի տվյալ օրվա մեծության և ֆոնդերի համար շահութահարկի տարեկան դրույքաչափի 1/365-րդի հիման վրա): Հաշվեգրված, սակայն դեռ չվճարված շահութահարկը ճանաչվում է որպես պարտավորություն, իսկ հաշվեգրվածից ավել վճարված մասը՝ որպես ակտիվ:

15.11. Ֆոնդի ֆունկցիոնալ արժույթը ԱՄՆ դոլարն է, իսկ ցանկացած այլ արժույթ դիտարկվում է որպես արտարժույթ: Արտարժույթով գործարքները փոխարկվում են ԱՄՆ դոլարի՝ գործարքի օրվա արտարժույթի սփոթ փոխարժեքով: Սփոթ փոխարժեքը համապատասխան կարգավորվող շուկայում տվյալ արտարժույթով վերջին գործարքի գինն է:

15.12. ՀՀ դրամով ներկայացված դրամային ակտիվները և դրամային պարտավորությունները հաշվետու ամսաթվի դրությամբ վերագնահատվում են ԱՄՆ դոլարի՝ ՀՀ ԿԲ կողմից հրապարակվող փոխարժեքով:

15.13. Արտարժույթով ներկայացված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերահաշվարկվում են ԱՄՆ դոլարի՝ իրական արժեքի որոշման օրվա սփոթ փոխարժեքով:

15.14. Փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ և ներկայացվում որպես զուտ փոխարժեքային օգուտ կամ կորուստ, բացառությամբ «իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական գործիքների գծով փոխարժեքային տարբերությունների, որոնք ներկայացվում են որպես «իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական գործիքների գծով զուտ օգուտի մաս:

16. Ֆոնդի եկամուտների բաշխման քաղաքականությունը

16.1. Ֆոնդի եկամուտները չեն բաշխվում մասնակիցների միջև և վերաներդրվում են: Ֆոնդի շահույթը (վնասը) արտացոլվում է փայի հաշվարկային արժեքի փոփոխությամբ:

17. Ֆոնդի հաշվին կատարվող ծախսերը և վճարները

17.1. Ֆոնդի հաշվին կարող են կատարվել հետևյալ վճարները և ծախսերը.

(ա) կառավարչի պարգևավճարը,

(բ) Ֆոնդի հաշիվների վարման հետ կապված ծախսերը և վճարները,

(գ) Ֆոնդի ակտիվներով գործարքների իրականացման հետ ուղղակիորեն կապված ծախսերը և վճարները, այդ թվում՝ գործարքների իրականացման հետ կապված վճարները, միջնորդավճարները, բանկային փոխանցումների գծով վճարները, ներդրումային հետազոտությունների ձեռքբերման ծախսերը,

(դ) Ֆոնդի հաշվին ներգրավված վարկերի, փոխառությունների գծով վճարվելիք տոկոսները, ռեպո և հակադարձ ռեպո գործարքների գծով վճարվելիք տոկոսները,

(ե) Ֆոնդի շահութահարկի գումարը (շահութահարկի գծով ծախսը),

(զ) Պահառուի պարգևավճարը,

(է) Ֆոնդի հաշվետվությունների աուդիտի հետ կապված ծախսերը,

(ը) Իրավական ծախսեր, որոնք ներառում են նոր ներդրումների իրականացման հետ կապված իրավաբանական ուսումնասիրության արդյունքում տրամադրվող իրավաբանական եզրակացության հետ կապված ծախսերը, դատական ծախսերը և կարգավորող ակտերին համապատասխանության ծախսերը:

17.2. Այն ծախսերը կամ վճարները, որոնք նախատեսված չեն Կանոնների 17.1 կետով, կատարվում են Կառավարչի հաշվին:

17.3. Կառավարչի պարգևավճարը բաղկացած է երկու մասից՝

(ա) տարեկան 2 (երկու) տոկոսի չափով հաստատուն վճար՝ ֆոնդի զուտ ակտիվների արժեքի նկատմամբ: Հաստատուն վճարը վճարվում է եռամսյակային պարբերականությամբ՝ եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 5-րդ աշխատանքային օրը: Հաստատուն վճարի հաշվարկման համար հիմք է ընդունվում ֆոնդի զուտ ակտիվների արժեքի միջին եռամսյակային մեծությունը:

(բ) հավելավճար՝ կիսամյակային 5 տոկոս եկամտաբերությունը (հաշվի առած բոլոր ծախսերը) գերազանցող գումարի 40 (քառասուն) տոկոսի չափով:

Հավելավճարը հաշվարկվում է հետևյալ սկզբունքով. բոլոր արժույթներով ակտիվները վերածվում են ԱՄՆ դոլարի՝ հավելավճարի հաշվարկման օրվա դրությամբ

հրապարակված ՀՀ ԿԲ փոխարժեքով, և պարգևավճարը հաշվարկվում է ԱՄՆ դոլարով արտահայտված եկամտաբերության նկատմամբ:

Հավելավճարը վճարվում է կիսամյակային պարբերականությամբ՝ կիսամյակին հաջորդող ամսվա մինչև 5-րդ աշխատանքային օրը:

Հավելավճարի հաշվարկման համար հիմք է ընդունվում նախորդող կիսամյակի վերջին օրվա դրությամբ եկամտաբերությունը:

Ընդ որում հավելավճարը գանձվում է այն պարագայում, երբ տվյալ կիսամյակի վերջում փայի արժեքը գերազանցում է նախորդող՝ այն կիսամյակի վերջի օրվա փայի արժեքը, որի ժամանակ գանձվել է հավելավճար (բացառություն է կազմում առաջին անգամ գանձվող հավելավճարը, որը հաշվարկվում է անվանական արժեքի նկատմամբ):

Առաջին կիսամյակում հավելավճարի համար հիմք է հանդիսանում փայերի առաջին թողարկումից մինչև օրացուցային կիսամյակի վերջին օրվա ժամանակահատվածը:

17.4. Կանոններով նախատեսված՝ Ֆոնդի հաշվին կատարվող ծախսերի և վճարների (առանց կառավարչի պարգևավճարի) առավելագույն չափը չի կարող գերազանցել ֆոնդի զուտ ակտիվների տարեկան միջին արժեքի 5 (հինգ) տոկոսը:

18. Կառավարչի և պահառուի փոփոխման կարգն ու պայմանները

18.1. Կառավարչի փոփոխությունն իրականացվում է «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի համաձայն:

18.2. Կառավարիչը կարող է այլ կառավարչի փոխանցել Ֆոնդի կառավարումը՝ Ֆոնդի կառավարման փոխանցման պայմանագրի կնքման միջոցով:

18.3. Կառավարիչը միջոցներ է ձեռնարկում Ֆոնդի կառավարումը «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով այլ կառավարչի փոխանցելու ուղղությամբ:

18.4. Պահառուի փոփոխությունն իրականացվում է «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի համաձայն:

18.5. Ֆոնդի պահառության պայմանագիրը դադարելուց հետո Պահառուն պարտավոր է Ֆոնդի ակտիվները և դրանց վերաբերյալ փաստաթղթերը փոխանցել նոր պահառուին: «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով Ֆոնդի պահառության պայմանագրի դադարեցման դեպքում Պահառուն պարտավոր է շարունակել կատարել ՀՀ օրենսդրությամբ, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով և սույն Կանոններով սահմանված իր պարտականությունները մինչև նոր պահառուի հետ պայմանագրի կնքումը և վերջինիս ֆոնդի ակտիվների փոխանցումը:

19. Ֆոնդի տեսակի փոփոխման, ֆոնդի միացման և դադարման կարգը

19.1. Ֆոնդի տեսակի փոփոխումը եւ միացումը կատարվում է Կառավարչի խորհրդի որոշման հիման վրա:

19.2. Որպես մասնագիտացված պայմանագրային ֆոնդ՝ Ֆոնդը կարող է վերափոխվել մեկ այլ մասնագիտացված պայմանագրային ֆոնդի:

19.3. Ֆոնդի տեսակի փոփոխումն իրականացվում է ՆՖՄ-ով սահմանված կարգով կանոնների փոփոխության միջոցով:

19.4. Ֆոնդի միացումն իրականացվում է ՆՖՄ-ով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված Կանոնների գրանցումն ուժը կորցրած ճանաչելու և այն ֆոնդի կանոնների մեջ կատարված համապատասխան փոփոխությունների գրանցման միջոցով, որին միացել են:

19.5. Միացման դեպքում Ֆոնդի ակտիվները և պարտավորությունները փոխանցվում են այն ֆոնդին, որին միանում է փոխանցման ակտին համապատասխան:

19.6. Ֆոնդի տեսակի փոփոխման և միացման հետ կապված բոլոր ծախսերը կատարվում են Կառավարչի հաշվին:

19.7. Կառավարիչը կարող է Ֆոնդի լուծարման մասին որոշում կայացնել միայն այն դեպքում, երբ վերջինս չի փոխանցել Ֆոնդի կառավարումը այլ կառավարչի: Պահառուն կարող է որոշում ընդունել Ֆոնդի դադարեցման մասին, եթե Ֆոնդի կառավարումը փոխանցվել է Պահառուին և Պահառուն չի փոխանցել Ֆոնդի կառավարումն այլ կառավարչի: Ֆոնդի դադարեցման մասին որոշում չկայացվելու դեպքում Կենտրոնական Բանկը պարտավոր է պահառուի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ Ֆոնդի դադարեցման պահանջով հայցադիմում ներկայացնել դատարան:

19.8. Կառավարիչը կամ Պահառուն օրենսդրությամբ պահանջվող տեղեկությունները ներառող հայտարարություն է հրապարակում Ֆոնդի դադարեցման վերաբերյալ առնվազն իր Ինտերնետային տնային էջում: Ֆոնդի դադարեցման հաղորդագրության հրապարակման հաջորդ օրվանից Ֆոնդի փայերի թողարկումն ու մարումը կասեցվում է:

19.9. Ֆոնդը դադարելիս կառավարիչը կամ Պահառուն իրականացնում են Ֆոնդի ակտիվների իրացմանը, Ֆոնդի հանդեպ ունեցած պարտավորությունների հավաքագրմանն ու Ֆոնդի պարտատերերի պահանջների բավարարմանն ուղղված միջոցառումներ: Ֆոնդի հաշվին Ֆոնդի լուծարման ծախսերը ծածկելու նպատակով կարող է օգտագործվել առավելագույնը լուծարման մասին որոշման կայացման օրվա դրությամբ հաշվարկված Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի 2%-ը: Ֆոնդի դադարեցման հետ կապված նշված մեծությունը գերազանցող ծախսերը կրում է Կառավարիչը կամ որպես կառավարիչ հանդես եկող անձը:

19.10. Ֆոնդի պարտատերերի պահանջների բավարարումից հետո Կառավարիչը Ֆոնդի ակտիվները բաշխում է Մասնակիցների միջև Ֆոնդում նրանց մասնակցության չափին համամասնորեն: Կառավարիչը պարտավոր է առնվազն 3000 տպաքանակով հանրապետական տարածում ունեցող մամուլում, ինչպես նաև իր ինտերնետային տնային էջում հրապարակել տեղեկություն Ֆոնդի ակտիվների բաշխման կարգի և ժամկետների վերաբերյալ: Ֆոնդի մասնակիցներին նրանց փայերի դիմաց վճարումը կատարվում է բացառապես դրամական միջոցներով: Բոլոր Մասնակիցներին վճարումները պետք է կատարվեն Ֆոնդի պարտատերերի պահանջների բավարարումից կամ միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահից հետո (այն դեպքում, երբ Ֆոնդը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ) 20 օրվա ընթացքում: Ֆոնդի փայերը

չեղյալ են համարվում և դրանցից բխող իրավունքներն ու պարտավորությունները դադարում են բոլոր վճարումները կատարելու պահից սկսած: Փայերի չեղյալ հայտարարման դեպքում մարման վճար չի գանձվում:

20. Ֆոնդի կանոնների փոփոխությունը

20.1. Կանոնները փոփոխությունն իրականացնում է Կառավարչի Խորհրդը:

20.2. Կանոնների փոփոխությունները «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով Կենտրոնական Բանկում գրանցվելուց հետո հրապարակվում են Ինտերնետային տնային էջում:

20.3. Փոփոխություններն ուժի մեջ են մտնում Կենտրոնական Բանկում գրանցվելու պահից, եթե Կառավարչի Խորհրդի որոշմամբ դրանց ուժի մեջ մտնելու ավելի երկար ժամկետ սահմանված չէ:

20.4. Կառավարիչն իրավունք ունի Ֆոնդի վերաբերյալ տեղեկություններ և հաշվետվություններ ուղարկել Մասնակիցների իրեն հայտնի փոստային կամ էլեկտրոնային հասցեներով:

Համարակալված և կնքված է 24 (քսանչորս) թերթ

Լիցենզավորման և կորպորատիվ ֆինանսների

Վարչության Կորպորատիվ ֆինանսների բաժնի պետ՝

Հայկ Եսայան

Լիցենզավորման և կորպորատիվ ֆինանսների

Վարչության Կորպորատիվ ֆինանսների բաժնի վերահսկող՝

Սեդա Գրիգորյան